Հովհաննես Թումանյան

Օր. Մ. Վ.-ին

Երբոր բացվելիս է եղել արփին,
Սարերի լանջում կամ թե քարափին,
Դիմացը կանգնած ես շատ եմ դիտել.
Առաջին շողը դեռ ինձ է դիպել.

Եվ ես ծանոթ եմ այն հրաշալի
Գույն ու ձևերին արևագալի,
Որ այնքան շքեղ մեզ ցույց են տալիս
Երկինք ու երկիր քնից արթնելիս:

Բայց քեզ տեսնելուց օրեր անցկացած,

Երբոր վերստին տեսա լուսաբաց,
Հասկացա գաղտնի կապերը բնության.
Բացվում էր պայծառ առավոտն ամռան,
Եվ ցոլանալով շաղախվում էին
Վաղ արշալույսի շողերն առաջին

Ջինջ կապուտակին անամպ երկնքի,
Որ գիշերային քողը յուր դեմքի
Թեթև մշուշը դեռ արևմուտքում
Իսպառ վայր ձգել չէր համարձակվում,
Մինչ առավոտյան լույսի երերուն

Ժապավենները խայտալով սիրուն
Երկնային ծովի կապուտակ ծոցում
Հեռո՛ւ և հեռու էին տարածվում.
Եվ մի կյանք, ասես, նուրբ ու սիրազեղ
Ծանոթ ակնարկով խաղում էր այնտեղ.

Ծանոթ էր թվում կապույտն երկնքի
Եվ ծիծղուն շողը անտես արեգի...

Եվ ես հիշեցի սրտի թնդյունով,
Աչքերդդ կապույտ, նույնպիսի գույնով,
Նրանց ժպիտը զվարթ, կուսական

Որ արշալույսին նման է այնքան.
Տեսա՝ երկուսն էլ մի բան են պատմում,
Երկուսն էլ տեսա՝ արև են բերում,
Մեկը՝ լույսի,
Մյուսը՝ հույսի:

1892